Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
ապրիլի 12-ի N 456 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆՇՎԱԾ ՎԱՅՐՈՒՄ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԱԾ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՁԱԿԵԼԻՍ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՊԱՏՎՈՎՃԱՐԸ ՏԱԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր կնքած շարքային կազմի պարտադիր զինծառայողներին զինվորական ծառայությունից արձակելիս (այսուհետ՝ նաև պատվովճար ստացող քաղաքացի) հաշվարկվող պատվովճարը տալու, սահմանված ուղղություններով պատվովճարի տնօրինման գործընթացի հետ կապված հարաբերությունները:

2. Յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում պատվովճար ստացող քաղաքացիների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության բյուջետային հայտի հիման վրա:

3. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր կնքած շարքային կազմի պարտադիր զինծառայողների պատվովճարը հաշվարկվում է

զինվորական ծառայության ժամկետը լրանալու և (կամ) առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչելու հիմքով ժամկետից շուտ զինվորական ծառայությունից արձակելու դեպքում:

4. Պատվովճար ստացող քաղաքացուն զինվորական ծառայության ժամկետը լրանալու հիմքով զինվորական ծառայությունից արձակելիս պատվովճարը հաշվարկվում է սահմանված առավելագույն չափով, իսկ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչելու հիմքով ժամկետից շուտ զինվորական ծառայությունից արձակելիս պատվովճարը հաշվարկվում է սահմանված առավելագույն չափը 36 ամսվա վրա բաժանելու և ստացված մեկ ամսվա գումարը մինչև զինվորական ծառայությունից արձակելու ամիսը ներառյալ ծառայած ամիսների թվի վրա բազմապատկելու արդյունքում ստացված չափով:

5. Պատվովճարն անկանխիկ գումար է, որը փոխանցվում է պատվովճար ստացող քաղաքացու անվամբ՝ հատուկ այդ նպատակով բանկում բացված հաշվին: Այդ հաշվին փոխանցված դրամական միջոցները կանխիկացման ենթակա չեն՝ բացառությամբ ժառանգման և (կամ) սույն կարգի 12-րդ կետում սահմանված դեպքերի: Այդ հաշվից գումարներն օգտագործվում են միայն սույն որոշմամբ սահմանված կարգով և ուղղություններով: Պատվովճար ստացող քաղաքացին կարող է պատվովճարն օգտագործել թե՛ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 456 - Ն որոշմամբ սահմանված մեկ ուղղությամբ և թե՛ մեկից ավելի ուղղություններով:

6. Զինվորական ծառայությունից արձակվելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունն ապահովում է բանկում պատվովճար ստացող քաղաքացու անվամբ հաշվի բացումը և ոչ ուշ, քան պատվովճար ստացող քաղաքացուն զինվորական ծառայությունից արձակելու օրվանից

երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվարկված պատվովճարի գումարը փոխանցում է այդ հաշվին:

7. Սույն կարգի 6-րդ կետի կատարման նպատակով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը համապատասխան բանկի հետ կնքում է պատվովճարի գումարի փոխանցման և սպասարկման մասին պայմանագիր՝ համաձայն N 1 ձևի:

8. Պատվովճարն սպասարկող բանկերը մրցութային կարգով ընտրում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը՝ հաշվի առնելով բանկերի կողմից պատվովճարի սպասարկման պայմանները: Բանկերի կողմից պատվովճար ստացող քաղաքացու հաշվի բացման և սպասարկման գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է բացառապես Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը՝ օրենքով սահմանված կարգով բանկային գործունեության նկատմամբ իրականացվող բացառիկ վերահսկողության համատեքստում:

II. ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՎՈՎՃԱՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պետական ու հավատարմագրված ոչ պետական կամ օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններում միջին մասնագիտական և (կամ) բարձրագույն և (կամ) հետբուհական կրթական ծրագրերով ուսումնառության ուսման վարձի գումարները բանկի կողմից անկանխիկ վճարվում են համապատասխան ուսումնական հաստատության բանկային հաշվին:

10. Ուսման վարձի առաջին վճարումն իրականացնելու նպատակով պատվովճար ստացող քաղաքացին բանկ է ներկայացնում դիմում, դրան կցելով անձը հաստատող

փաստաթղթի, ուսումնական հաստատությունում ուսումնառության հրամանագրելու վերաբերյալ ուսումնական հաստատության ռեկտորի կողմից տրված հրամանի պատճենները, ուսումնական հաստատության կողմից տրված բնօրինակ տեղեկանք՝ ուսումնական հաստատության հավատարմագրված լինելու (բացառությամբ՝ օտարերկրյա պետության ուսումնական հաստատությունում սովորելու դեպքում), պատվովճար ստացող քաղաքացու ուսումնառության ժամկետի, ուսման վարձի ընդհանուր և ըստ ուսումնական կիսամյակների չափերի, կրթական ծրագրի, ուսումնական հաստատության բանկային հաշվի համարի վերաբերյալ: Եթե պատվովճար ստացող քաղաքացին սովորում է օտարերկրյա պետության ուսումնական հաստատությունում, ապա սույն կետում նախատեսված փաստաթղթերը պետք է լինեն նոտարական կարգով հաստատված հայերեն թարգմանությամբ:

11. Ուսումնառության յուրաքանչյուր հաջորդ տարվա համար բանկն ուսման վարձի վճարումները համապատասխան ուսումնական հաստատության հաշվին իրականացնում է պատվովճար ստացող քաղաքացու կողմից ներկայացված՝ ուսումնական հաստատության կողմից տրված պատվովճար ստացող քաղաքացու հաջորդ կուրս փոխադրվելու և ուսումնական կիսամյակի ուսման վարձի չափի վերաբերյալ բնօրինակ տեղեկանքի հիման վրա:

12. Ուսման վարձի վճարումները բանկի կողմից իրականացվում են ուսումնական կիսամյակների կտրվածքով: Եթե համապատասխան ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանքի համաձայն ուսումնառության տարիների համար ուսման վարձի ընդհանուր չափը պակաս է պատվովճար ստացող քաղաքացու հաշվին փոխանցված պատվովճարի չափից, ապա դրանց տարբերությունը, սակայն ոչ ավելի, քան քաղաքացու հաշվին փոխանցված պատվովճարի գումարի 20 տոկոսը, պատվովճար ստացող քաղաքացու ցանկությամբ և բանկ ներկայացված դիմումի հիման վրա,

բաժանվում է ուսումնառության բոլոր ամիսների վրա, և յուրաքանչյուր ամսվա համար ստացված գումարը կանխիկ կամ այլ եղանակով բանկի կողմից վճարվում է պատվո-վճար ստացող քաղաքացուն՝ որպես կենսաապահովման ծախս:

III. ՀԻՊՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԱՄՍԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՎՈՎՃԱՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ

13. Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից բնակարան ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով հիփոթեքային վարկի կանխավճարի և (կամ) ամսական վճարի գումարները բանկի կողմից անկանխիկ փոխանցվում են համապատասխան կառուցապատողի բանկային հաշվին, իսկ ամսական վճարի գումարները՝ հիփոթեքային վարկ տրամադրած բանկի կամ վարկային կազմակերպության հաշվին:

14. Հիփոթեքային վարկի կանխավճարի և (կամ) ամսական վճարի ուղղությունն ընտրած պատվովճար ստացող քաղաքացին օգտվում է այդ ուղղությամբ պատվովճարի օգտագործման իրավունքից, եթե նրա հիփոթեքային վարկի պայմանները համապա-տասխանում են «Բնակարան երիտասարդներին» վերաֆինանսավորող վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերության կամ «Ազգային հիփոթեքային ընկերություն» կամ «Արցախի ներդրումային հիմնադրամի վերաֆինանսավորող վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերության կամ Արցախի ներդրումային հիմնադրամի կողմից վերաֆինանսավորվող հիփոթեքային վարկերի ընդհանուր պայմաններին, որոնք հրապարակված են «Բնակարան երիտասարդներին» վերաֆինանսավորող վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերության կամ «Ազգային հիփոթեքային ընկերություն» կամ «Արցախի ներդրումային հիմնադրամի

վերաֆինանսավորող վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերության կամ Արցախի ներդրումային հիմնադրամի պաշտոնական կայքում: Պատվովճար ստացող քաղաքացին իրեն հիփոթեքային վարկ տրամադրած բանկից կամ վարկային կազմակերպությունից պատվովճարն սպասարկող բանկ է ներկայացնում դրա մասին տեղեկանք՝ համաձայն N 2 ձևի, եթե նրան հիփոթեքային վարկը տրամադրված չէ պատվովճարի գումարն սպասարկող բանկի կողմից:

15. Հիփոթեքային վարկի կանխավճարի և (կամ) ամսական վճարի գումարները փոխանցելու նպատակով՝ պատվովճար ստացող քաղաքացին պատվովճարն սպասարկող բանկ է ներկայացնում դիմում և՝

1) իր անձը հաստատող փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը կամ, առկայության դեպքում, նույնականացման քարտը.

2) իր հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը, ՀՎՀՀ-ն (առկայության դեպքում).

3) հիփոթեքային վարկի տրամադրման մասին պայմանագրի՝ նոտարական կարգով վավերացված պատճենը և գրավադրված գույքի սեփականության (կամ գրավադրված գույքի նկատմամբ իրավունքի) պետական գրանցման վկայականի պատճենը.

4) կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքի կառուցապատողի կողմից տրված տեղեկանք բնակարանն անմիջապես կառուցապատողից ձեռք բերված լինելու և կանխավճարի չափի մասին, ինչպես նաև բնակարանի առքուվաճառքի մասին պայմանագրի՝ նոտարական կարգով վավերացված պատճենը.

5) հիփոթեքային վարկ տրամադրած բանկի կամ վարկային կազմակերպության կողմից տրված տեղեկանքը հիփոթեքային վարկի գումարի և ամսական վճարների գումարների չափերի մասին.

6) անհատական բնակելի տուն կառուցելու դեպքում՝ անհատական բնակելի տան շինարարության թույլտվության պատճենը:

IV. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ (ՖԵՐՄԵՐԱՅԻՆ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԼԻԶԻՆԳ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՎՈՎՃԱՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ

16. Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում գյուղատնտեսական (ֆերմերային) գործունեության (այդ թվում՝ գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգ) ուղղությունն ընտրած պատվովճար ստացող քաղաքացին օգտվում է այդ ուղղությամբ պատվովճարի օգտագործման իրավունքից, եթե նրա գործունեությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի նիստի N 39 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրով կամ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից հավանության արժանացած բիզնես ծրագրերի հիման վրա:

17. Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում գյուղատնտեսական (ֆերմերային) գործունեության (այդ թվում՝ գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգ) ուղղությունն ընտրած պատվովճար ստացող քաղաքացուն տալիս է խորհրդատվություն՝ բիզնես ծրագրերի մշակման, մասնագիտական կողմնորոշման և գործունեության ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ձև N 1

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _____

ՊԱՏՎՈՎՃԱՐԻ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղ. Երևան _____ _____ 20 թ.

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ լիազոր մարմին), ի դեմս նախարար _____-ի, ով գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության _____ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա, և _____ ընկերությունը (այսուհետ՝ բանկ)՝ ի դեմս _____ -ի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ նաև կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1.1. Սույն պայմանագրում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝

1.1.1. **պատվովճարի գումար՝** Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 456 -Ն որոշմամբ (այսուհետ՝ որոշում) սահմանված գումար.

1.1.2. **պատվովճարի գումարի հաշիվ՝** բանկում բացվող հատուկ հաշիվ, որին փոխանցվում է պատվովճարի գումարը.

1.1.3. **քաղաքացի՝** որոշմամբ սահմանված կարգի համաձայն զինվորական ծառայություն անցած և զինվորական ծառայությունից արձակված զինծառայող:

1.2. Բանկը սույն պայմանագրով պարտավորվում է՝

1.2.1. լիազոր մարմնի պահանջով՝ զինծառայողի անվամբ բացել պատվովճարի գումարի հաշիվ՝ այդ հաշվին պատվովճարի գումարը փոխանցելու և այդ հաշվից վճարումներ կատարելու նպատակով.

1.2.2. ընդունել և պատվովճարի գումարի հաշվում մուտքագրել պատվովճարի գումարը.

1.2.3. պատվովճարի գումարի հաշվից որոշմամբ սահմանված ուղղություններով կատարել վճարումներ՝ քաղաքացու կողմից ներկայացվող՝ որոշման պահանջներին համապատասխանող հանձնարարականների հիման վրա:

1.3. Պատվովճարի գումարի հաշիվը բացելու և վարելու հետ կապված հարաբերությունները (ներառյալ հաշվի միջոցների տնօրինման ուղղությունները, սահմանափակումներն ու կարգը, ինչպես նաև հաշվից փոխանցումների իրականացման համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը) կարգավորվում են որոշմամբ, զինծառայողի և բանկի միջև կնքված պատվովճարի գումարի հաշվի մասին պայմանագրով, սույն պայմանագրով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր դրույթներով:

1.4. Պատվովճարի գումարների հաշվում առկա դրամական միջոցները ենթակա չեն կանխիկացման՝ բացառությամբ որոշմամբ սահմանված դեպքի:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կողմերն իրավունք ունեն՝

2.1.1. սույն պայմանագրով սահմանված կարգով դադարեցնելու պայմանագրի գործողությունը.

2.1.2. օրենքով սահմանված կարգով բողոքարկելու մյուս կողմի գործողությունները և (կամ) անգործությունը:

2.2. Կողմերը սույն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեղեկատվությունը փոխանակում են փոխհամաձայնեցված կարգով:

2.3. Բանկը պարտավոր է՝

2.3.1. պատվովճարի գումարը քաղաքացու անվամբ բացված պատվովճարի գումարի հաշվում մուտքագրել մինչև համապատասխան դրամական միջոցների ընդունման օրվան հաջորդող բանկային օրվա ավարտը.

2.3.2. քաղաքացու համար պատվովճարի գումարի հաշիվը բացել ու սպասարկել, ինչպես նաև այդ հաշվից գումարները փոխանցել անվճար.

2.3.3. քաղաքացուն մատչելի եղանակով (էլեկտրոնային, առձեռն և այլն) անվճար տրամադրել իր պատվովճարի գումարի հաշվում մուտքագրված և այդ հաշվից

ելքագրված գումարների մասին տեղեկատվություն (այսուհետ՝ քաղվածք)՝ ըստ քաղաքացու պահանջի.

2.3.4. պատվովճարի գումարի հաշվում առկա դրական մնացորդի դիմաց քաղաքացուն վճարել տոկոս՝ նրա հետ կնքած պայմանագրով սահմանված չափով.

2.3.7. պատվովճարի գումարի հաշվից փոխանցումներն իրականացնել որոշման պահանջներին համապատասխան.

2.3.8. պայմանագիրը լուծելու դեպքում շարունակել այն շահառուների պատվովճարի գումարների հաշիվների սպասարկումը, որոնք որևէ ծառայության գծով ունեն չմարված պարտավորություններ:

2.4. Լիազոր մարմինը պարտավոր է օրենքով սահմանված կարգով ապահովել սույն պայմանագրի շրջանակներում իրեն հայտնի դարձած՝ բանկային կամ ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկատվության գաղտնիությունը:

3. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի կապակցությամբ վեճեր կամ տարաձայնություններ առաջանալու դեպքում դրանք լուծվում են 15 օրվա ընթացքում՝ բանակցությունների միջոցով, իսկ բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ դատական կարգով:

3.2. Վեճերի կամ տարաձայնությունների շուրջ վարվող բանակցությունների կամ դատական գործընթացների ժամանակահատվածում բանկը պարտավոր է շարունակել մատուցել սույն պայմանագրով սահմանված ծառայությունները:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ լրացուցիչ համաձայնագրեր կնքելու միջոցով, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

4.2. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

4.3. Սույն պայմանագիրը լուծվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարվելու դեպքում՝ պայմանագրի լուծման

օրվա մասին նախապես, բայց ոչ ուշ, քան երկու ամիս առաջ մյուս կողմին ծանուցելու պայմանով: Պայմանագրի լուծումը նախաձեռնող կողմը պարտավոր է պայմանագիրը լուծելու մասին պատշաճ կարգով ծանուցել նաև քաղաքացուն՝ պայմանագրի լուծման նախատեսվող ժամկետից առնվազն մեկ ամիս առաջ: Սույն պայմանագիրը լուծվում է պայմանագրով ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ մակարդակով կատարման հետևանքով պատճառված վնասները լրիվ հատուցելու պայմանով: Պայմանագրի լուծման դեպքում քաղաքացու պատվովճարի գումարի հաշվում առկա դրամական միջոցները փոխանցվում են քաղաքացու՝ մեկ այլ բանկում բացված պատվովճարի գումարի հաշվին:

4.4. Սույն պայմանագիրն իրավաբանական ուժ է ստանում կնքման պահից և գործում է անորոշ ժամկետով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ԲԱՆԿ
---	---
(պաշտոնատար անձի անվան ու հայրանվան սկզբնատառերը, ազգանունը)	(իրավասու անձի անվան ու հայրանվան սկզբնատառերը, ազգանունը)
---	---
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ.	Կ.Տ.
------- ---------- 20 թ.	------- ---------- 20 թ.

Ձև N 2

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ» ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ «ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ԿԱՄ «ԱՐՑԱԽԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՐՑԱԽԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն տեղեկանքը տրվում է առ այն, որ քաղաքացի _____ -ին
(անունը, հայրանունը, ազգանունը)

տրված վարկը լիովին բավարարում է «Բնակարան երիտասարդներին» վերաֆինանսավորող վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերության կամ «Ազգային հիփոթեքային ընկերություն» կամ «Արցախի ներդրումային հիմնադրամի վերաֆինանսավորող վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերության կամ Արցախի ներդրումային հիմնադրամի կողմից սահմանված վերաֆինանսավորվող հիփոթեքային վարկերի ընդհանուր պայմանները:

ՏՆՕՐԵՆ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.

____ _____ 20 թ.